բաղարձաւ դէպի զօրքը, մինչև որ Ֆրէյսինէի մինիստրութեան ժամանակ 1890 թ. նա նորից նշանակվեց պետ գլխաւոր շտաբի: Միրիբէլը համարւում էր ֆրանսիական զօրքի ոգին:

† ՄԱԿ-ՄԱՀՈՆ, Ֆրանսիայի մարշալ, վախճանվեց: Հանգուցեալը քաջ զինուորական էր և անաջող քաղաքական անձն: Թիէրի անկումից յետոյ՝ նա ընտրուեց Նախագահ ֆրանսիական հանրապետութեան 1873 թ. և հրաժարուեց իւր պաշտօնից 1879 ին տեղ տալով Ժիւլ Գրևիին:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ տպւ-ծ պ. Ց. Մուրադեանցի գեղեցիկ յօդւածի վրայ դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը:

## ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ՝

1) ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.—«Արսէն Դիմաքսեան» վէպ, արտատպած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպար. Ռոտինեանցի, 1893 թ., գինն է 1 րուբլի 50 կոպէկ:

2) ԲԱՂԱՂԵԱՆ, Սամուէլ.—«Զրոյցներ հողի մասին» Հրատ. Թիֆլ. Հր. Ընկերութեան. Թիֆլիս, տպար. Վրաց Հրատ. Ընկ., 1893 թ., գինն է 15 կոպէկ:

3) ՖԼԱՄՄԱՐԻՈՆ, Կամիլ—Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն, 100 նկարով: Յարմարեցրեց դասատուութեան համար Շ. Դելոն, թարգմանեց ֆրանսերէն չորրորդ տպագրութիւնից Տ. Յովհաննիսեան: Հրատարակեց Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկ.— Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի, 1893 թ. գինն է 1 ռուբլի:

---

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ